ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5399-Ա « 05 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՉԺԵՆՉԺՈՈՒ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գրիգորյանի 2.11.2026 թվականի №Ն/73776-26 գրությունը, «YUTONG» ընկերության կողմից ստացված հրավերը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի նոյեմբերի 8-ից 14-ը ներառյալ գործուղել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հենան նահանգի Չժենչժոու քաղաք՝ հետևյալ կազմով.

Գարեգին Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Անդրանիկ Թևոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Սարգիս Բեջանյան	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանի և աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ օրապահիկի, որն իրականացվում է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն Սարգիս Բեջանյանի գործուղման հետ կապված բորոլ ծախսերն իրականացվում են «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ գիշերակացի, որը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Արամ Ալեքսանյանին:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանի

բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Մաթևոսյանին:

5.«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի տնօրեն Սարգիս Բեջանյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի գլխավոր ճարտարագետ Ասքանազ Պետրոսյանին:

6.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ